

գործ են ունենում, նրանք մեծ մասամբ ապրում են ընութեան մէջ. նրանց զբազեցնում են առուակները, դաշտերն ու անտառները. Ուսուցէք նրանց խելացի կերպով սիրել Աստուծոյ ամբողջ աշխարհը, սիրել խայտարդղէտ թիժեռներին, և' գեղեցիկ թռչնիկին և' այլանդակ որդին. Տարիների ընթացքում նրանք կսովորեն սիրել և շրջապատող մարդկանց. Եթէ երեխան գաստիարակուի այնպէս, որ նրա համար ճանձին իսկ վիրաւորելը խղճալի լինի, այն ժամանակ միթէ նա կկարողանայ երբ և իցեցաւեցնել իւր մերձաւորին, իւր եղբօրը, իւր նման մարդուն.

Միշտ յիշեցէք, որ Աստուած ստեղծել է մեծ հրաշալի տաճարը, իսկ նրա միջի աստուածաշատութեան ջերմեռանդութիւնը կախուած է մարդկանցից:

## Ա Ն Պ Ց Ո Ւ Ղ Թ Զ Ե Ն Ի Ն

(Բարութեան սերմերից).

Երուսաղէմում՝ դպիրների և փարիսեցիների քաղաքում, Յիսուս իրան անվտանգ չէր զգում. Յերեկը ժողովրդի մէջ, որ ջերմեռանդութեամբ լսում էր Փրկչի խօսքերը, անկառիած ոչ մի յանդուգն ձեռք չէր կարող բարձրանալ նրա վրայ, Որը բժշկում էր հիւանդներին և միսիթարում վշտացեալներին. բայց գիշերը՝ խաւարի մեռուելային խաղաղութեան ժամանակ, ծերակուտի անդամների չարութիւնը ամենայն հեշտութեամբ կարող էր Յիսուսի ազատութիւնը և կերանքը վտանգի ենթարկել. Այդ իսկ պատճառով Փրկչչը Երուսաղէմում լինելիս գիշերները սովորաբար հեռանում էր Յեթանիա, Ղաղարոսի տունը. Այստեղ անձնուէր բարեկամների մէջ նա կարող էր միամիտ և անվտանգ հանգիստ առնել ցերեկուայ աշխատանքներից յետոյք. Այդպէս եղաւ նաև Երուսաղէմի հանդիսաւոր մուտքից յետոյք՝ չարչարանքներից առաջ-

Յիսուս այդ ամբողջ օրը անցկացրեց տաճարում, Նա սուվորեցնում էր ժողովրդին և բժշկում հիւանդներին, յետոյ թօղնելով նրանց գուրո եկաւ քաղաքից դէպի Բեթանիա և այնտեղ անցկացրեց գիշերը իսկ առաւոտը Երուսաղէմ վերադառնալիս՝ Յիսուս անօթացաւ և ճանապարհին մի թղենի տեսնելով՝ մօտեցաւ և նրա վրայ բացի տերեւներից ոչինչ չդտնելով՝ ասաց, «Ճի՞ այսուհետեւ ի քէն պտուղ եղիցի ի յաւիտեան» (Մատ. իԱ. 19—20.)։ Եւ թղենին նոյն բողէին չորացաւ։ Մի քանի ընթերցողների մէջ Աւետարանի այդ կտորը կասկած է յարուցանում։ Տինջու Փրկիչը այդպէս խիստ վարուեց թղենու հետ, մտածում են նրանք, միթէ թղենին յանցաւոր էր որ անպտուղ էր, չէ որ նա բուսել էր այնպէս, ինչպէս հրամայել էր Աստուած, արդեօք աւելորդ խստութիւն չէ այդ։ Նոյն իսկ ի զուր և անարդար անդժութիւն՝ այդպէս պատժել անշունչ ծառին»։

Սակայն ուշի ուշնի մտածենք Աւետարանի այդ պատճութեան վրայ։ Փրկիչը երբէք ոչինչ չի կատարած ի զուրտեղը և անմտութեամբ։ Աւր մնաց թէ անդժութեամբ։ Աւետարանում ի ծնէ կուրի բժշկութեան պատճութեան մէջ ասուած է թէ երբ աշակերտները հարցրին կուրի մասին՝ որի մեղաց համար էր տանջւում՝ իւր թէ ծնողաց, Յիսուս պատասխանեց. «Ոչ դորա վնաս է և ոչ հօր և մօր իւրոյ, այլ զի յայանի լիցին գործքն Աստուծոյ ի դժու»։ (Յով. թ. 3.) Յովհաննու նոյն Աւետարանում երկու զլուխ յետոյ կարդում ենք. «Առաքեցին առ Նաքորքն նորա (Ղաղարու) և ասեն. Տէր, ահաւասիկ զոր դուն սիրէիր հիւանդացեալ է», Յիսուս լսելով այդ՝ ասաց. «այդ հիւանդութիւն չէ ի մահ, այլ զի փառաւորեսցի որդի Մարդոյ» (Յով. ժԱ. 2—4.), Այդպէս ևս թղենու դատապարտութիւնը նրա զայրութի լոկ արտայայտութիւն չէր միայն, այլ Աստուծոյ կամաց պարզաբանութեան խրատական օրինակ։ Սուրբ դրքում Աստուծոյ ասած այսպիսի խօսքեր ենք կարդում. «Ահաւասիկ կամ ես առ դուրսք և բաղխեմ, եթէ ոք լուիցէ ձայնի իմում և բանայցէ

զգրունսն, մտից առ նա և ընթրիս արարից առ նա և ընդիս» (Յայտ. Գ. 20.), ինչպէս անպատսպար օտարականը, որ օթեան է խնդրում, բարձրածայն աղաղակում է, «ներս թողէք», բաղիսում դուռը և պատուհանը, այնպէս ևս Ցէրը իւր արդարութեամբ ամեն կերպ մուռք է որոնում դէպի մարդկային սիրտը, քարոզում է մարդկանց իւր կամքը, պարզում է բարի, արդար Աստուածոյին կենաց երջանկութիւնը, որոնք չեն լսում խօսքերը, նրանց հրաշքներ է ցոյց տալիս Մի խօսքով այսպէս թէ այնպէս կամենում է մարդուն խելքի բերել, զարթեցնել նրա մէջ խիզճը, ստիպել նրան մտածել իւր մասին։ Այդպէս՝ խորը քնած մարդկանց եթէ չեն կարողանում կանչելով զարթեցնել, թափ են տալիս ձեռքից, շարժում գլուխը, ուսերը, ցած իջեցնում անկողնակալից և վերջապէս վրան ջռը ածում։

Դաւիթ թագաւորը սպանեց իւր ծառայ Ռւրիային և նրա կնոջ Բերսարէին իրեն կին առաւ Յանկութիւնը կատարելով՝ նա հանդիսաւ է իւր սրառում, չի վրդովում խղճից։ Աստուած ուղարկում է Նաթան մարդարէին և վերջինս դդաստացնում է Դաւիթին՝ ասելով այն հարստի առակը, որը աղքատի ձեռքից խլել էր վերջի գառը։ Յովիսան մարդարէն շլեց Աստուածոյ պատուէրը՝ երթալ ապաշխարութիւն քարոզել հեթանոս նինուէացւոց, այլ նաւ նստաւ և գնաց բոլորովին այլ կողմ։ Աստուած Յովիսանի յետևից պատգամաւոր է ուղարկում փոթորկին։ Քամու սուլոցը, ալիքների հարուածը և ջարդուած կայսերի ճայթիւնը արթնացրին նաւի յատակին քնած Յովիսանին, իսկ նրա մէջ արթնացրին խոր քնով քնած խիզճը։ Բարելացւոց Բաղդասար թագաւորը խնճոյքի ժամանակ արքենալով և այլ ևս չիմանալով թէ ինչպէս ցոյց տայ իւր արքեցութիւնը, հրամայեց բերել այն սրբաղան անօթները, որոնք կողովտուած էին Երուսաղէմի տաճարից։ Այն ժամանակ օղում երեաց մի ձեռք, որը արքեցութիւնից խելագարուած թագաւորի և նրա հանդիսականների աշքի առաջ պատի վրայ հրեղէն տառերով գրեց

ահեղ խօսքեր, որոնք Դանիէլ մարդարէի բացատրութեամբ նշանակում էին. «Աստուած կշռեց Բաղդասարին, դժու նրան թեթև և քամուն տուաւ նրան, որպէս փետուր»: Նոյն ժամայն բոլորը զգաստացան, ամենքի գլխից արբեցութիւնը վերացաւ:

Այդպէս ևս Աւետարանի արբեցութեան մէջ Յիսուս չորացած թղենիով ուզում է խելքի բերել իրան Ասող Հրէից. Չորանալու դատապարտուած անպտուղ թղենին օրինակ էր Աստուածային գործի ծառայելու համար Աստուծուց ընտրուած Խորայէլ ժողովրդի, որ իւր մարդկային գործերը կարդի բերելու համար ։մոռացել էր Աստուծոյ գործը։

Թղենին միւս ծառերից տարբերում է նրանով, որ նրա վրայ պտուղները տերեներից առաջ են երեւում։ Նախ հասնում են պտուղները, ապա ծառը սկսում է զարդարուիլ տերեներով։ Նշանակում է, եթէ թղենին կանաչաւորուած է տերեներով, նրա վրայ տերեների ներքոյ անպատճառ պէտք է լինին պտուղներ։ Հենց այդ հաշուով էլ Յիսուս ճանապարհին մօտեցաւ թղենուն Թղենին իւր փարթամ, հիւթալի կանաչով հեռուից աշքի էր ընկնում։ Հաղարաւոր անցօրդներ թէ ձիաւոր թէ հետիւտն իրանց գործերին շտապելով, հիանում էին այդ շքեղ զարդարանքին նայելով և կարծում էին թէ նրա ճիւղերը կոտրատում էին տերեների ներքոյ գլունուած պտուղների ծանրութիւնից։

Բայց ահա Յիսուս անօթութիւնից մօտեցաւ թղենուն մի քանի պտուղ քաղելու և ոչ մէկը չդտաւ, ինչու ուրեմն այլ ևս այստեղ կանգնած է այս թղենին։ Ինչու գետնից հիւթ է ստանում, անձրև ծծում, արեգակի ջերմութիւնը կլանում։ Ինչու նա ի զուր տեղը այդ բոլորը խլում է միւս թղենիներից։ Նրանք օդուտ են բերում, պտուղ են տալիս, իսկ սա ապարդիւն ոչնչացնում է Աստուծոյ պարգևները։ Աւելի լաւ է թնդ չորանայ, վառելիքի կամ շինութեան երթայ. թող վերջապէս աւելի լաւ է փոփի, ուրիշ բոյսերի պարարտութեան ծառային

Ուստի և Յիսուս ասում է. «մի այսուհետեւ ի քէն պառազ  
եղիցի յաւխանա», Եւ թղենին նոյն ըովէին չորացաւ.  
Հետեապէս ի զուր զայրոյթ, աւելորդ խօսութիւն  
չկայ. Բայց առաջ դնալով տեսնում ենք Աստուծոյ կամաց  
նոր, իմաստուն պարզաբանութիւն. Հրէաները իրանց ձեռ-  
ներով էին իրանց քարը պատրաստում՝ կամենում էին  
սպանել նրան, որը եկել էր նրանց խիզճը արթնացնելու,  
նրանց հոգւոյ և մարմնի ոյժերը Աստուծոյ գործին ծառա-  
յեցնելու. Յիսուս իւր խօսքով, ինչպէս կախարդական անմաշ-  
հական ջրով, աշխատում էր կենդանացնել նրանց մեռած  
հոգին. հրաւիրում էր նրանց գէպի նոր կեանք, պատուէր-  
ներով և առակներով բացատրում էր Աստուծոյ արքայու-  
թեան օրէնքները, իրան նրանց օրինակ էր տալիս. նրա  
խօսքերը չէին լսում, նրան խայտառակում էին, Աստու-  
ծոյ գործը առաջ չէին տանում. Նրթոնքներով ազօթք  
էին ասում, իսկ սրտերը շատ հեռու էր Աստուծուց:  
Պահը խստութեամբ էին պահում, մարմինները պահպա-  
նում ապականուած կերակրից, իսկ մտածմունքները ու-  
տիսուայ էին, գործերը անվայել, անմաքուր. Հագնում  
էին լայն հանդերձներ, իսկ նրանց տակի հոգիներն ու-  
սրտերը նեղ էին, չարախնդիր, պատրաստ գրօշի վաճառ-  
ուելու. Երուսաղէմի տաճարը զարդարում էին մարմարիո-  
նով, ոսկով, թանկագին քարերով, իսկ հոգիների տաճարը  
աւազակների այր էր, անասունների գոմ, օձերի բոյն:  
Արտաքին կողմից երեսում էին բարեպաշտ, իրանք իրանց  
ցոյց էին տալիս իրեն. Աստուծոյ ժողովուրդ, իսկ Աստու-  
ծոյ կամքը չէին կատարում, ճշմարիտ Աստուծոյ անունը  
հեթանոսների մէջ չէին փառաբանում. Աստուծոյ արդա-  
րութեան փափագ ունեցողներին հոգեոր հաց չէին տա-  
լիս. Ժողովուրդը անպառուղ թղինի էր, գրսից փարթամ-  
տերեները զարդարում էին ծառը, բայց ճղների վրայ ոչ  
մի պտուղ չկար. Գոռոզութիւն մէկմէկու առաջ, տտե-  
լութիւն գէպի թշնամիները, զզուելի շահասիրութիւն-  
ահա իսրայէլ ազգի հիմնական գծերը. Ի՞նչ պիտի լինի  
կեանքը այնուհետեւ, ինչպէս պիտի շարունակուի, Յիսուս

վերջի օրերն է անցնում խրայելացւոց մէջ. վերջի խօսքերն է ասում նրանց և վերջի դասն է տալիս թզենու միջոցով. «Նայիր, ժօղովուրդ Աստուծոյ, ասում է Յիսուս Հրէից, ահա թզենու մէջն է քո ճակատագիրը. Որպիսի սիրով տնկել է քեզ Աստուած, ինչպէս առատօրէն ոռոգել եմ ես քեզ յաւիտենական կենաց աղբիւրի ջրով. Որպիսի սիրով ջերմացրել եմ քեզ. տնւր ուրեմն Աստուծուն պտուղ։ Ցոյց տնւր մարդկանց, թէ ինչ պէտք է լինի մարդկային կեանքը, երևեցրու աշխարհի առաջ հոգուդ գեղեցկութիւնը։ Ո՞չ, չնս տալիս Ուրեմն այսուհետեւ քո վերայ այլ ես պտուղ թող չլինի յաւիտեան։ Ի՞նչ օգտագործ է ասել խուլին և լուսաւորել կուրին։ Աւելի լաւ է խօսքն ուղղել ուրիշին։ «Արդ՝ առէք ի դժանէ զքանքարդ և տուք այնմ, որ ունիցի զտան քանքարդ, զի ամենայնի, որ ունիցի, տացի և յաւելցի և որ ոչն ունիցի և զոր ունիցին, քարձցի ի նմանէ»։ Մատ. ԺԵ 28—29։ Եւ չորացաւ թզենին։ Զարութիւնը չորացրեց խրայէլի սիրութ։ Հոռվմայեցիք ջնջեցին հրէից թագաւորութիւնը։ Ոչնչացաւ երուսաղէմը և կործանեցաւ Սիոնի տաճարը։ Թափուեցան փարթամ տերենները։

Այժմ, ընթերցող, հրէաներից դառնանք մեզ։ Զէ որ Աւետարանը մի միայն հրէից համար չի գրուած, գուցէ անպտուղ թզենին մի միայն նրանք չեն։ Ղուկասու Աւետարանի ԺԳ գլխում ասուած է, որ մի անդամ ումանք եկան Յիսուսի մօտ և պատմեցին նրան այն գալիլիացին ների մասին, որոնց արիւնը Պիղատոս խառնել էր նրանց զօհերի արեան հետ։ Յիսուս ասաց նրանց. «Համարիք թէ այնք գալիլեացիք եղեն մեղաւորք քան զամենայն գալիլեացիս, զի այնպիսի անցս կրեցին։ Ո՞չ, ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխարիցէք, ամենեքին նոյնպէս կորնչիցիք, կամ նոքա ութեւտասունքն, յորոց վերայ աշտարակն անկաւ ի Ասղովամ և սպան զնոսա համարիք թէ նոքա պարտապանք եղեն քան զամենայն մարդիկ։ որք ընակեալք են յԵրուսաղէմ։ Ո՞չ, ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխարիցէք, ամենեքեան նոյնպէս կորնչիցիք։ (Ղաւկ, ԺԳ.

1—5.) Հրէաները անպառող թզենի էին և կորան, ոչնչացան։ Ուրիշ շատ ժողովրդներ նոյնպէս անհետ վերջացան։ Մինչև իսկ նրանց առունը չի մնացել, որովհետեւ ոչինչ բաւ բան չին թողել յիշելիք։ Յաւխտենական է մի միայն Աստուծոյ գործը՝ ճշմարտութիւն, բարութիւն և ոէր, իսկ անհետ ոչնչացած ազգերը, ինչպէս անպառող թզենին, չնայելով նրանց արտաքին փայլին, փառքին և զօրութեանը, աղքատ են եղել բարութեամբ, չին ճանաչել ճշմարտութիւնը, իսկ Աստուածային կենաց մասին նոյն իսկ չեն մտածել, հոգւով չին ցաւել։ Զկարծենք թէ այս մեզ չի վերաբերում։ Ո՛չ, ասում է Աստուածային խօսքը, ամենքդ ՚է այդպէս կոչնչանաք, եթէ չապաշխարէք, եթէ բարի պտուղ չըբերէք։ Ինչպէս ոչնչացել են հին Խորայեւլացիք, հին Բարելացիք, Պարսիկները, Ասորիք, այդպէս ևս անհետ կարող է ոչնչանալ և մեր ազգը, եթէ բարութեան և արդարութեան մէջ չցոյց տայ առանձին կենացանացուցիչ ոյժ, մարդկանց շտայ Աստուածային կենաց օրինակ։ Յիսուս Քրիստոս Երկրի վրայ գրել է Աստուծոյ արքայութեան սկիզբը, հիմնարկել է այն աշտարակը, որը պէտք է մարդկանց բարձրացնի Երկինք։ Նա ինքը եղել է այդ շինութեան անկիւնաքարը, մարդկանց տուել է ճշմարիտ կենաց վարդապետութիւնը և իւր օրինակով ցոյց է տուել թէ ինչպէս պէտք է այդ վարդապետութիւնը կատարել։ Մարդիկ պէտք է այդ աշտարակի շինութիւնը շարունակեն, մարդկային կեանքը պէտք է աւելի և աւելի վերացնել Աստուածային բարձրութեան։ Մարդկանց մէջ որքան աւելի լինի Աստուածային արդարութիւնը, նոյնքան ևս մաքուր կդառնայ մարդուս սիրտը։ որքան զօրեղ, ազգու լինի եղբայրական սիրոյ ձայնը Երկրի վրայ, նոյնքան մարդիկ աւելի մօտիկ կլինին Աստուծոյ, նոյնքան շուտով Աստուծոյ արքայութիւնը կտիրէ մեր մէջ։ Այստեղից հետեւում է, որ իւրաքանչիւր մարդու պարտականութիւնն է առանձին առանձին և բոլոր ժողովրդինը ի միասին՝ աշխատել ուժեղացնել աշխարհի մէջ սիրոյ շերմութիւնը, որքան կարելի է բարի գործ շատ կատա-

րել, մարդկանց պարզել թէ խօսքով և թէ օրինակով ճշմարտութիւնը՝ կեանքի մէջ, ինչպէս ահագին համաշխարհային շինութեան վրայ աշխատանքը առաջ է գնում անդադար, անընդհատ, դիշեր-ցերեկ, տարեցտարի, դարեցդար։ Մարդկանց մի հերթը դալիս է ի փոխարէն միւս հերթի։ Ումանք վերջացնելով իրանց ժամանակը, գնում են ի հանդիսա, նրանց տեղը բոնում են ուրիշները։ Այդ փոխանակութիւնը մարդկանց սերունդն է։ Ումանք ապրում են, ծերանում, մեռնում, միւսները ծնում, առնանում, գերեզման իջնողներին փոխարինում։

Մեզանից առաջ շատ գործ է կատարուել թէ քիչ կամ ինչ պիտի լինի մեզանից յետոյ՝ այդ չէ գլուխոր հարցը։ Մեր նպատակն է կատարել մեր գործը։ Մենք հասել ենք շինութեան այս ինչ յարկին, մեզ կանգնեցրել են որմը բարձրացնելու յայտնի կողմից՝ որը մէջ տեղն է, որը անկեան մօտ, որը անկիւնն է բարձրացնում—ահա ուրեմն արա քո գործը։ Որքան ոյժդ ու հմտութիւնդ ներում է, քրիստոնէական աշտարակի որմը բարձրացրու, նպաստիր Աստուածային կեանք կազմելուն երկրի վրայ։ Նա գեռ ևս իսկական գործաւոր չէ, որ շրջապատել է իրան աղիւսներով, կրով և կաւով, իսկական գործաւորը նա է, որ առանց ձեռները ծալելու կարգը կարդի յետեւ վից բարձրացնում է որմը դէպի վեր ու վեր անդադար, անընդհատ, աշխատում է մինչև որ գան հետեւեալ հերշթակալները և իրան աղատ թողնեն հանգստանալու։

Արդ՝ այժմ հարցնենք մեզ. «ինչ ենք արել Աստուածային արքայութիւնը երկրի վրայ հաստատելու համար։ Բարձրացրել ենք արդեօք Քրիստոսի աշտարակի վրայ նոր յարկ և կամ գոնէ մի երկու նոր կարդ շինել ենք։ Զէ որ շինութեան համար լաւագոյն ուրուագիծը ցայց է է արուած։ Աւետարամնը պարզ և մանրամասնօրէն ասում է թէ ինչպէս պէտք է կազմել կեանքը, որ յաւիտենական լինի։ Տրուած նիւթն էլ նոյնպէս անթերի է, նայեցէք մարդկային բանականութեան վրայ։ Եթէ մարդո մի որ և է բանի ցանկութիւն ունենայ, իր խելքի ոյժով ինչերի չե

հասել, ինչպիսի զարմանալի մեքենաներ, գործիքներ, ամեն տեսակ յարմարութեան միջոցներ չի հնարել. Միայն թէ էականը այն է՝ թէ մարդս իւր բանականութիւնը ինչի է գործադրում։ Մէկը իւր մտքի բոլոր ոյժը լարում է, որպէս զի հնար գտնի հազարաւոր գծը բաղդների կեանքը բարելաւելու, որբերին պատսպարելու, քաղցածներին կերակրելու, իսկ մի ուրիշը, ընդհակառակը, գիշեր-ցերեկ գլուխ է ճաքացնում որքան կարելի է շատ մարդկանց աղքատացնելու։ Երկուսի մօտ էլ միւնոյն նիւթն է՝ գլխի մէջ բանականութիւն, սակայն գործադրութեան նիւթերն այլ են։ Իսկ մարդու սիրտը, Ո՞րպիսի ոյժ է տալիս մարդուն, երբ նա բոլոր սրտով նուիրում է որ և է գործի հերոսը փառք է որոնում, նրա հոգին փափադում է աղմկալի գովքի և նա կատարում է մեծամեծ քաջութիւններ, երկիւղ չի կում մահից, առանց հառաջանքների տանում է սոսկալի տանջանքներին Ժլատը վերին աստիճանի փողասէր է և նա շատ անգամ տանջուում է քաղցից, զրկուում է ուրախութիւնից, պատրաստ է աւելի աւելի շուտով մեռնել քան բաժանուել գանձից, սիրտը մարդուս մեծ ոյժ է տալիս Հարցը նրանումն է միայն թէ մարդս ինչ բանի է սրտով կաշում, ինչի է ուղղում ոյժերը։ Բանականութիւն և սիրտ—ահա Աստուծոյ ամենամեծ պարգևները, երկրի վրայ Աստուածային բարի կեանք ստեղծելու թանկադին նիւթերը։ Ի՞նչ բանի վրայ ենք ծախսում, որպիսի գործադրութիւն ենք տալիս նրանց։ Աշխարհիս ամենամեծ կառավարիչը, Աստուած, մեզ կենաց ճանապարհն է դուրս բերել, հրաւիրել է մեզ աշխատանքի, իւրաքանչիւրիս իւր տեղն է նշանակել, ի՞նչ ենք արել ցայժմ։

Երբ վառարանը կած-կած է վառում, իրանից ջերմութիւն է արձակում և տաքացնում ամենքին, ով որ ժօտենայ։ Երբ կանթեղի մէջ իւղը առատ է և պատրոյգը լաւ ուղղած, այն ժամանակ նա ամրող գիշերը կվառի և կլուսաւորէ խաւարը։ Արդեօք գուք էլ ձեզնից սէր արձակում էք մարդկանց վրայ։ Լուսաւորում ենք արդեօք

Աստուածային արդարութեամբ մարդկային մթութեան մէջ։ Կտաւի վրայ որքան էլ գեղեցիկ նկարուած լինի խարոյիլը, նրանից ջերմութիւն չի յառաջանալ ցրտութեան մէջ և ոչ լոյս՝ մթութեան մէջ։ Եթէ ուզէին մի որ և է կոշտ վայրենու բացատրել կրակի ներգործութիւնը, որի բարերար ազդեցութեանը նա բոլորովին անծանօթ լինէր, ամենից լաւն է մի խարոյի վառել, այն ժամանակ վայրենին խոկոյն և եթէ կհասկանար, որ կրակով ապեելը շատ լաւ է և յարմարաւոր, քան առանց կրակի։ Այդպէս է և մեր հաւատը, նրա ոյժը խօսքերի մէջ չէ և ոչ նրա մասին եղած պատմութիւնների, այլ նրա համաձայն վարած կետնքի մէջն է։ Հաւատի մասին եղած խօսքերը՝ ծառի վրայի տերեներն են, իսկ մեր գործերը, զգացմունքներն ու սրտի շարժումները—գրանք պատզներն են։ Մեր սեպհական թղենին, մեր կետնքը, ինչով է ծածկուած։ Մի միայն տերեներն ով, թէ տերեների ներքոյ կան նաև պատզներ։ Մենք չենք մտածում գատապարտել, մեզ բոլորին Դատողը—Աստուած է, այլ ուզում ենք հարցնել որպէս ուզզեկիցների։ «այնտեղ ենք գնում արդեօք, այն ենք անում, ինչ որ պէտք է։ Խելքի և սրտի կենդանացուցիչ ոյժերը գէպի պտուղն ենք ուղղում, թէ մի միայն գէպի տերեները։

Պետրովից բարգմ. Գրիգոր Շենյ, Նոր-Արեւելանց

### ՀՐՈՎՄԱՅԵՑԻ ՀԸԹԻԿՐԵՊԵՏԸ

Ք. Մարիկէ

Անցաւ մեծ շարաթը, և այդ օրը ոչ մի անսպասելի բան չ'պատահեց։ Եօթնեկի առաջին օրուայ արշալոյուը դեռ նոր էր սկսել բացուիլ, երբ յանկարծ սաստիկ գետնաշարժ եղաւ\*։ Ղունկիանոսն ու իւր զինւորները սար-

\* ) Մատթ. Գլ. 28, հմը. 2.